

Հայ գրականության մարզային օլիմպիադա

Հարցաշարերի պատասխաններ

12-րդ դասարան

1. Ոսկեդարի պատմիչ Ավարայրի երգիչ Եղիշեն՝ Ավարայրի ճակատամարտի մասնակիցն ու ականատեսը, ճակատամարտից հետո Մամիկոնյան Դավիթ երեցի հրամանով: Եղիշեն իր մատյանն անվանել է «Վասն Վարդանաց և հայոց պատերազմի» Մատյանը բաղկացած է նախաբանից և յոթ եղանակից, եղանակ նշանակում է ի սկիզբ, խոսքի սկիզբ: Սկզբում Եղիշեն ուրվագծում է Ավարայրի ճակատամարտին նախորդող ժամանակի պատմաքաղաքական իրադրությունը: Հայաստանը բաժանվել էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև. Պարսկական մասում դադարել էր հայոց Արշակունի արքայատոհմի իշխանությունը, և երկիրը կառավարում էր պարսից արքայի նշանակած մարզպան Վասակ Սյունին, որն իշխել է 438-451թ.թ. Հազկերտ II-ը հաջողության է հասնում արևելյան կողմերում և սկսում ավելի նեղել քրիստոնյաներին:

Նա մի նամակ է ուղարկում հայերին, որտեղ ասվում էր, «ինչ կրոն , որ ձեր տերն ունի , դուք էլ նույն ունեցեք, մանավանդ որ աստծո առաջ էլ ձեզ համար հաշիվ պետք է տանք» :

449 թվականին մայրաքաղաք Արտաշատում ժողովվում են «մեծամեծ հայ նախարարներ» 18 եպիսկոպոս՝ վեհափառ հայրապետ Հովսեփ Վայոցձորեցու գլխավորությամբ և ջախջախիչ պատասխան գրում Հազկերտին:

Նախարարները և մարզպանը կանչվում են Տիգրան՝ պատասխան տալու: Նրանք կեղծ ուրացությամբ ընդունում են գրադաշտականությունը, որպեսզի վերադառնան Հայաստան: Հենց այստեղից էլ Եղիշեն կասկածի տակ է առնում Վասակի հայրենասիրությունը և ասում, որ Վասակը ցանկանում է «ընտանեբար հաճոյանալ անօրենին» : Վասակի շուրջն են համախմբվում մի քանի նախարարներ: «Եվ այսպես, -գրում է պատմիչը,-Վասակը շարժվեց ու շփոթեց Հայոց աշխարհը և խաղաղության մեջ խռովություն գցեց »: 451թ.Մայիսի 26-ին Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում սկսվում է կենաց ու մահու կռիվը: Այս կռվի ճամանակ Վասակը թաքնված կանգնել էր պարսից բանակում: Վասակը պարսիկ զորավարի հետ պաշարում է այն ամրոցը, որտեղ ապաստանել էր «Հայոց զորքերից մի գունդ սուրբ քահանաների հետ միասին»:

Սպանվում է 213 հոգի: Վասակը միշտ դավաճան է ու կեղծ, նա փայփայում էր Հայոց թագավոր դառնալու հույսը և ցանկացած խարդախությամբ հաճոյանում Հազկերտին: Սակայն Հազկերտը չի հավատում նրան , քանի որ չէր կարողացել հավատափոխ անել հայերին, և Վասակն այլևս պետք չէր նրան: Նա հրապարակով խայտառակում և մահվան է դատապարտում դավաճանին:

Եղիշեն Մամիկոնյան տան պատմիչն էր և չի բացառվում , որ Մամիկոն-Յաններին ավելի հերոսացնելու համար ուղղակի մրոտում է մարզպանին, որը ըստ իր բացատրության , ցանկանում էր փրկել Հայաստանը:

Մահվան նկարագրությունը սարսափելի է: Եվ վերջացնում է այսպես.« ..Եվ նա , որ հանցագործությամբ ուզում էր Հայոց աշխարհի վրա թագավոր լինել, նրա գերեզմանի տեղն էլ չգտնվեց, որովհետև մեռավ ինչպես շուն և քարշ տրվեց ինձպես էշ»: Եղիշեն նզովում է Վասակին , անեծքի դատապարտում հետագա սերունդների կողմից:

1943-ին` Հայրենական պատերազմի ժամանակ Դերենիկ Դեմիրճյանը գրեց իր «Վարդանանք» պատմավեպը` պատմական աղբյուր ունենալով Եղիշեի մատյանը: Դեմիրճյանը վեպը գրեց` ոգևորելու հայ զինվորներին, հիշեցնելու մեր փառավոր հաղթանակները:

Նա օգտվում է նաև Փարպեցու գրքից, որտեղ պատմիչը դրական հատկանիշներ է տեսնում Վասակի մեջ: Եղիշեն ներկայացնում է ավարտուն դավաճանի կերպար, մինչդեռ Դեմիրճյանը ներկայացնում է այն ճանապարհը , որը նրան դարձնում է դավաճան. Քաղաքական անիրականալի ծրագրեր, փառասիրություն, եսասիրություն: Դեմիրճյանը չի արդարացնում Վասակին , բայց նրան ներկայացնում է որպես քաղաքական հասուն գործչի , ով ամեն կերպ փորձում է խույս տալ կռվից, միաժամանակ փայփայելով Հայոց թագը նվաճելու փափագը:

Հոգեբանական ծանր իրավիճակներում է հայտնվում Վասակը. Նա զոհում է որդիներին , կնոջը, ոչնչի առաջ կանգ չի առնում, բայց Դեմիրճյանին հաջողվել է ստիպել ընթերցողին` խորանալ նրա դավաճանության պատճառների մեջ: Նրան բարոյական անկման են տանում փառասիրությունը, իշխանատենչությունը, անգթությունը: Բայց նա ծանոթ է նաև տառապանքին, հուսահատությանը, լքվածությանը:

Վեպի ավարտից հետո ընթերցողը նաև խղճում է Վասակին, իսկ Եղիշեի Մատյանի ընթերցումից հետո միայն ատելություն , անեծք է մնում:

Որքան էլ Դեմիրճյանը փորձել է Վասակին ներկայացնել ներկայացնել որպես հմուտ քաղաքագետ, այնուամենայնիվ ինքն էլ համոզված է նրա դավաճանության մեջ: Իհարկե, Եղիշեն ավելի համոզիչ է . նա մարգապանին դիտում է որպես Հայոց աշխարհի հայր, որն իրավունք չունեի խոտոր վելու ո՛չ հավատից , ո՛չ հայրենասիրությունից:

2.Սիլվա Կապուտիկյանը` «ամենայն հայոց բանաստեղծուհին», իր ժողովրդի հարազատ զավակն է, որ յուրաքանչյուր պահ զգում է նրա զարկերակը, նրա պատմական դառը ճակատագրի շուրջ «մտորում ճանապարհի կեսին` » հաստատելով նրա հավերժությամբ ապրելու գաղտնիքը, մաքառումը, սլացքը:

Նա միաժամանակ այդ ժողովրդի սրտի ամենազգայուն լարերի կախարդական թարգմանն է, սիրո փառաբանողն ու խոստովանահայրը:

Կապուտիկյանը գրականություն մտավ շնչալից , «Օրերի հետ» , օրերի հրամայականի կանչով: «Օրերի հետ » նրա առաջին գրքի խորագիրն է, որը վերաբերում է նրա ողջ պոեզիային. Նա կանգնած է «պատնեծին վրա» իր ժրջվրդի կյանքի օրհասական պահերին, նա ժամանակի արձագանքն է ժամանակի մեջ:

Նրա պոեզիայում հաշտ են սիրտն ու միտքը, ներդաշն են թախիժն ու խոհը, հարազատ են անցյալն ու ներկան: Բանաստեղծուհին անմրցելի , երբ երգում է հայրենիք ու սեր:Սիրո հրաշալի բանաձևում է «Երգ երգոց»

Բանաստեղծությունը, սա մի յուրատեսակ խոստովանություն է երջանիկ սիրո բացակայության մասին.

Ինձ շատ բան տվեց բախտը աշխարհում,

Միայն չտվեց երջանիկ մի սեր:

Թե ինչո՞ւ է բախտը զլացել սեր տալու բանաստեղծուհուն, երևում է նրա ապրած տագնապից, նրա կարոտի կանչից: Նա ճարտասանական հարցին պատասխանում է համապատասխան սիրո զգացումով`

Չտվեց , որ ես միայն չլցվեմ

Խուլ երջանկությամբ` անընտել ցավին,

Չլացող աչքի արցունքըտեսնեմ,

Լսեմ խոսքերը` չասված տակավին...

Պարզ է, որ բանաստեղծուհին իր անունով խոսում է բուլրի անունից, «բյուր քույրերի» անունից, որոնց «խռովքն անհատնում» զգում է իր ողջ էությանմբ, արյամբ: Նա հայոց երգի մատյանը լցնում է «հավերժվող հառաչով կնոջ», որ կարոտի պահին մոռանում է ամեն ինչ և պատրաստ է իր սիրուն ընդունել «թեկուզ ուրիշ գրկից», նա երջանիկ է, որ «թափառում է փողոցներում», իր սիրած էակի հետ, թեկուզ իր սերը ուրիշին է սիրում, նա համաձայն է ապրել սիրելով «թեկուզ ես` քեզ , դու` ուրիշին»:

Կապուտիկյանը «վերթերյան տառապանքը» տանում է արժանապատիվ, անբողոք, սակայն թաքուն սիրո` ակնկալիքով:

«Երգ երգոց» վերնագիրը մեզ ծանոթ է Հին Կտակարանից` Սողոմոն արքայի «Երգ երգոցից»:

Իմաստուն ու ամենակալ արքան սիրահարվում է մի հովվուհու և աղերսում է , «Ետ դարձիր՝, ով իմ սիրեկան, նմանիր այժեամին կամ եղևիկի ձագին», «Ես քնում եմ , բայց սիրտս արթուն է», սիրեկանը հեռացել է , բայց Սողոմոնը խնդրում է , որ եթե գտնեն նրան «ասեք, թե սիրով հիւանդ եմ ես»:

Պարույր Սևակի «Երգ երգոց» պոեմը կարծես Սողոմոնի «Երգ երգոցի» մեկնությունն է, նա նույնպես խնդրում է Երուսաղեմի աղջիկներին ի՞ր Սուլամիթային ասել, որ ինքը «հիվանդ է կարեվեր» սիրով: Բախտի քմահաճույքով Սևակի սերը նույնպես կրում է Սուլամիթա անունը և նույնպես հրեուհի է(այստեղ պարզապես պետք է հիշատակել նման վերնագրերով ստեղծագործությունները): Ուրեմն` «Երգ երգոցներ» եղել են, կան ու կլինեն համաշխարհային գրականության գանձարանում, ու նաև հայ գրականության գանձարանում, քանի որ գրականությունը համաշխարհային գրականության հարուստ բաժիններց է, և մենք իրավամբ հպարտանալու իրավունք ունենք:

3.Ալիսիա Կիրակոսյանը սփյուքահայ գրականության բացառիկ դեմքերից: Ծնվել է գաղթական վանեցիների ընտանիքում 1936-ին Արգենտինայի Կորդոբա քաղաքում: Վանեցի ծնողները նրան տվել են հայկական դպրոց և վաղ մանկությունից սնել հայրենիքի մասին հրաշք պատմություններով` անբեկանելի կարոտ արթնացնելով կորուսյալ հայրենիքի նկատմամբ: Հետո նա հաճախել է իսպանական դպրոց, ավարտել Բուենոս Այրեսի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Նա ստեղծագործել է իսպաներեն, սակայն կյանքի վերջին տարիներին ոչ միայն ստեղծագործել է հայերեն, այլև հայերեն թարգմանություններ է կատարել իսպանացի

բանաստեղծներից: Մի յուրահատուկ խանդով է սիրել Հայաստանը. Վկան՝ «Նամակ առ Հայաստան» չքնաղ բանաստեղծությունը: «Արմատ և Էություն» հայերեն թարգմանված գրքի առաջաբանում նա գրում է. « Ես սիրում եմ իմ արյան ծագումը և հպարտ եմ դրանով: Հոգուս անմնացորդ մակընթացությամբ եմ ես հանդիպում Հայաստանին»:

Ալիսիա Կիրակոսյանի պոեզիան ընթերցողն ընդունեց սրբազան երկյուղածությամբ. Սիրո օրհներգեր էին նրա բանաստեղծությունները, որոնցից շատերը երգվում են («Այպես ուզում եմ անունդ թողնել...») Աղոթքի նման է հնչում Կիրակոսյանի «Սերը գոյության հանճարն է միակ» հնգատող բանաստեղծությունը, որի ծալքերը բացելու դեպքում կարող ենք պոեմ ստանալ,ինչպես Սևակի «Երգ երգոցը»: Այո՛, նախաստեղծ ժամանակներից աշխարհը կառուցվել է սիրո հենքի վրա, սիրուց են ծնվել աստղերը, արևն ու երկինքը, ծաղկել են հազարաբույր ծաղիկները, քչքչացող ջրերը սեր են երգել, սիրել է առաջին մարդը՝ Ադամը, և սիրուց ծնվել են բարությունն ու հավատարմությունը, նվիրումն ու ինքնմոռումը:

Բանաստեղծուհու համար սիրո հականիշը մահն է, ոչ թե պարզապես չսիրելը, քանի որ առանց սիրո ամայնում է երկիրը, խավարում է երկինքը: Ամեն սիրահարի հետ ծնվում է մի նոր մեղեդի, ծլարձակում է մի անմոռուկ ծաղիկ, ու վերաշինվում է աշխարհը, ծովանում ու փոթորկվում, բռնում անմահության ճանապարհը: Սիրո բացակայությունից չի դատարկվում սիրահարի հոգին, այլ վերստին լցվում է անօրինակ տագնապով ու սպասումով, և այստեղ բանաստեղծուհուն օգնության են հասնում Տերյանը(Ես իմ սերն եմ սիրում) և Սևակը(նորից չեն սիրում, սիրում են կրկին)՝ վերանորոգելով անմահությունը: Ալիսիա Կիրակոսյանը մակդիրներ չի օգտագործում, չկան համեմատություններ ու այլաբանություն. Նա պարզ ու անպաճույճ լեզվով ընդամենը բանաձևում է Սերը. «Սերը գոյության հանճարն է միայն», ուրեմն՝ «առանց սիրո կյանքը երբեք չի շարունակվի», - համոզված է բանաստեղծուհին և, առանց որևէ ավելորդ ճիգի , համոզում է նաև իր ընթերցողին:

Աստվածաշունչը հաստատում է՝ Աստված սեր է, և յուրաքանչյուրը, հավելյով աստվածային Էությանը, լցվում է սիրով ու «վերանորոգում անմահությունը»:

4. Հայոց բնաշխարհի անկրկնելի թարգմանիչ Համո Սահյանը մեր գրականությանը տվել է ոչ միայն բնապաշտական , ոչ միայն հայրենասիրական ու խոհական եզակի պոեզիա, այլև սիրո մի այնպիսի փառաբանություն ու տառապանք, հիշողություն ու ավսոսանք, որ առանց այդ բանաստեղծությունների կկորչեր մեր պոեզիայի ամենագեղեցիկ գույներից մեկը՝ կարոտի գույնը: Ծնվելով Սյունյաց հպարտ աշխարհում, ըմբռնվելով Գյազբեյի ծաղկաբույր օդը, խայտալով Որոտանի ջրերի հետ, նա նուրբ արվեստով մեզ է վերադարձնում այս ամենը՝ հագցնելով իր երգի թիկնոցը:

Սահյանի նուրբ զգացումների՝ հիացումի, ավսոսանքի , մեծարման, հրաշալի հոգու վերաթռիչներ են նրա սիրային բանաստեղծությունները: սիրո անգիտակից դրսևորման հրաշալի պահերը անկրկնելորեն գեղեցիկ են՝ պատված վերհուշի ծխով: Ժամանակի հեռվից նա վերհիշում ու թվարկում է այն բոլոր գեղեցիկ պահերը, որոնք ապրել է ինքը՝

չհասկանալով, որ հենց այդ է սերը «որ երբեք-երբեք չի մոռացվելու» : Քանի որ տարիների հեռվից արթնացած հուշերը նրան ապրեցնում են խոտի դեզի ստվերով, գիծ հորթերի փախուստով, տատի գալուստից արագացող սրտի տրոփյունով ,և բանաստեղծը կրկին վերապրում է անցյալը: («Առաջին սեր») : Սիրո համար հատկապես ցավագին է բաժանման պահը. Մոռանում ես բառերը, տագնապում ես , անզորությունից կարկամում, անորոշությունից պատեպատ խփվում.

Ա՛խ, նորից «Բարի ճամփա», Ա՛խ, նորից « մնաս բարով»,
Մի տեսակ տագնապ կա, որ Չես ասի ոչ մի բառով:
Անթարգմանելի տագնապից տրտունջ է ծնվում, բայց և համակերպում կա.
Գնում ես, չես էլ ասում,
Թե մեկ էլ երբ ես գալու,
Եկար էլ, ինչ իմանամ, Ո՞ւմ մոտ ես վիշդ լալու:

Բայց կա սպասում, վերադարձի կանչ, հակադիր զգացմունքների մի խառնուրդ, որն արտահայտվում է նույնքան հակադիր վարքագծով`
Ների՛ր ինձ, դու իմ բարի,
Իմ խելոք ու իմ համառ,
Հարկադիր այո ծիծաղի
Եվ թաքուն լացի համար:

Հեռանում է սիրելին,և նա հարկադրաբար ծիծաղում է` արցունքները պահելով ծիծաղի մեջ, թաքուն է արտասվում, հեռանալուց հետո վերադարձի հույս է փայփայում: Բանաստեղծության առաջին և վերջին քառատողերը կրկնվում են , միայն «մնաս բարով» ու «բարի ճամփան» են տեղերը փոխում. հենց այս է սպասումը. Մնաս բարովը անվերադարձ է, իսկ բարի ճամփան հույսի փոքրիկ շող է...

Այս բանաստեղծությունը համահունչ է «Ես կուզեի...» բանաստեղծությանը: Բանաստեղծը պատրաստ է զոհաբերվելու`
Ես կուզեի քո գրկի մեջ մթներ օրը իմ վերջին

.....
Ես կուզեի ինչ որ ունեմ իբրև նվեր տայի քեզ:

Դարձյալ գեղեցիկ վերհուշի վրձնանկար է «Հրաշք լիներ» բանաստեղծությունը :

Հրաշք լիներ, բանաստեղծը մանկանար, և «Առուն ստվերս տաներ ջաղաց պանի աղչկան» : Թվում է, թե տեսնում ես խոխոջող առուն, հեռվում չըխ չըխկացող ջրաղացը, այնտեղ խաղացող արաթաթախ գեղեցկուհուն և առվի հետ վազում ես դեպի նա .

Ա՛խ ձեն ու ձուն չհաներ,
Իմ ցավերի լուռ վկան,
Այրող ցավերս տաներ
Ջաղացպանի աղչկան:

Գեղջկական կյանքի անկրկնելի պատկեր է, պարզ ու շիտակ, ու եթե հրաշք լիներ ու կրկնվեր «այն հրաշքը իրական» բանաստեղծը կլիներ ամենաերջանիկը` նորից մանկանալով :

Անպատասխան ու չհասկացված սիրո արձագանք են «Քո խոնարհ ջրկիրն եմ եղել», «Դու իմ կյանքն էիր», նվիրումի ու մերժման հրաշալի պատկեր է «Ես

հարուստ էի...»: Բանաստեղծը կարող է երկինք ու ծով նվիրել , «Յարդագողի փոշին թափ տալ շեմի վրա», հավիտենություն ու անհայտ մայրցամաք նվիրել, բայց սիրած աղջկան ոչ մի «հարստություն» չի գոհացնում, և վերջում նա ինքն է դառնում «անհատների հարստություն», քանի որ պարզվում է , որ նրան ոչինչ էլ հարկավոր չէր...: Տառապանքից ու սիրո դրամայից երկփեղկված հերոսին է նկարագրում «Կգամ» բանաստեղծությունը: Ինչ էլ որ պատահած լինի, եթե անգամ իրեն «մոռացած լինի, հողը մաղած լինի», և «վտարած լինի վերհուշերի խոնավ քարանձավից », «միևնույնն է կգամ, ինչ էլ լինի կգամ»: Կգա , որպեսզի հաստատի սիրո անխուսափելիությունն ու հավերժությունը:

Գետնի տակից կգամ,

Մի հեռավոր, անհայտ մոլորակից կգամ:

Կգամ ու թափ կտամ

Յարդագողի փոշին շեմքիդ վրա:

Ու մենք էլ հավատում ենք , որ Սահյանի ինքնանվիրումով ու տագնապ ներով , սպասման տառապանքով ու գտնելու հրճվանքով առլեցուն սերը միշտ կլինի մեզ հետ ու կլինի հրաշք:

Գնահատման չափանիշներ 12-րդ դասարան

1 հարց- 1-ին` 4 միավոր, 2-րդ` 1 միավոր:

2 հարց-1-ին` 3 միավոր, 2,3-րդ` 1-ական միավոր:

3 հարց- 1-ին` 3 միավոր, 2-րդ` 2 միավոր:

4 հարց- 1-ին` 1,5 միավոր, 2-րդ` 1,5 միավոր: